37. ՍԻՆԱՄ

Կէղնի մարթ մա, անուն Սինամ, լավ հարուստ մարթ մա, կունենա աղջիկ մա, տրղեմ ու իրեն կնիկը։

Գելնի ուրին ուխտ կէրթա, կառնի ուրին մանչ ու կնիկը ու կէրթա ուխտ։ Տուն լա կմնա իրեն աղջիկ թաք։ Կէրթա իրեն տիրացուին թամբահ կենա։

Թամբահ կենա.— Իմ աղջկաս մուղաթ կեցի չուր ես ուխտ էրթամ ու դառնամ գամ։ Իմ աղջկաս հինգ օր հեխ մի օխկա միս տար, իմ աղջկաս տուր։

Էդ տիրացուն լա կը բերե օխա մա միս ու կիտա աղջկան։

Աղջկան կըսե.— Հայրիկդ ընձի թամբահ էրեր է քեզի մուղաթ կենամ։

Տիրացուն էդա աղջկան կըսե թե.— Իմ հետս խոսա։

Աղջիկ լա դուրս չի ելնի, գիշեր զօր տան մեշն է՝ օր ըսեն հեչ արեգակը չելնի, օր ուրեն հերը ըխտից դառնա ու գա։

Աղջիկը չի խոսի, տիրացուն աղջկանեն կը հերսոտի թե՝ իմ հետս չխոսար դու։

Գելնի տիրացուն կէրթա գեղի ջյազի պառավու քով, կըսե թե.— Էսա աղջըկան գըլոխ գեշ բան մը կարա՞ս էնե։

Պառավ լա գելնի գուքա աղշկա տուն, դուռ կը զարկա, կըսե.— Այ օղուլ, արի դուռը բաց։

Աղջիկը գուքա դուռը կը բանա։ Էդ ջյազի պառավը կէրթա էդ աղջկա տունը, կըսե թե.— Աղջի, արի քեզի տանիմ համամ մա ու տանիմ գըլոխդ մըլոխդ լվամ, մեխք ես հերդ ու մերդ հոս չեն, դու մենակ ես։

Աղջկան պառավը կառնա կտանա համամ մա։ Կը տանա համամ, աղջկան գըլոխը կը լվա։ Աղջկան կը խափե, կը տանե, տիրացուին էլ կ'բերե համամի մեջ։ Խոսացնե աղջիկն տիրացուի հետ։ Աղջիկ էդ տեղ տիրացուի ու պառվի հետ կըկռվի գը։

Գելնի ու աղջիկը գուքա տուն, գուքա տուն ու դուռը կը փակե, կը մրտնի նե։

Տիրացուն էլ կէրթա իրեն համար մեկ դիր մա կը գրե։

Աղջկա հերն էլ վախտ թըմմեր է արթըխ գալու, մոտիցեր է գեղին։ Տիրացուն լա իրա դրած դիր աղջկա հոր կը ղրկե, կըսե թե. «Քու աղջիկ ընձի թամբահ էրիր, թե մուղաթ կեցի, քու աղջիկդ քեշ բաներու էլավ, քեշ ճամբեստանց հետ գնաց, գողութեն էրավ, բոզութեն էրավ»։

Գիրը կէրթա հորը կը հասնի, հերը կը բանա ու կաշե, կաշե օր տիրացուն ա գրե, օր քու աղջիկը քեշ բաներու հետ է, գողութուն կենե, բոզութուն կենե։

Հերն էլ մանչուն կըսե թե.— Օղո՛ւլ մենք հոս կը կենանք, դու գնա ու քու քրոջդ աղա, քրոջդ գըլոխը ղարկ, թորթե, կորու՝ հետի մենք գանք մեր տուն։

Ախպերն էլ գելնի ու գուքա, գիշերը գուքա, քրոջ դուռը բյաքլամիշ կենե. «Աշեմ իմ քուրս ի՞նչ գեշ բան ա էրե, ետև զարկեմ»։

Իրեք օր քուրոջ դուռը բյաքլամիշ կ'էնե, կաշե օր իրեն քուրոջ տուն հեչ մարթ մա չի գա։ Քուրը միամիտ ու անպարտ է, չի ղըմշի օր ուր քուրը զարկա։ Քուրոջ կըսե թե.— Քուրս, արի դուռը բաց։

Քուրն է գուքա դուռը կը բանա։ Գուլա ու գըյնի ախպոր ոտնեբը, կըսե.— Ախպեր, դու էկաք ըխտատեղեն,— կըսե թե,— ախպեր ջան, ապա հերս ու մերս ո՞ւրտեղ են։

Կ'ըսե թե.— Հերս ու մերս դուքան, ես առեջ եկա, որ քեզի տեսնիմ, կըսե, ետ պիտի դառնամ, օր հերս ու մերս բերեմ։

Քուրն էլ յալվար գըյնի, թե ընձի էլ տար հետդ, հորս ու մորս տեսնիմ ճամբեն, հորս ու մորս կարոտութեն կը քաշեմ գը, կարոտբեր եմ։

Ախպերն է կառնե քուրոջն ու կ'էրթա։ Կ'էրթա ախպըրիմը քով։

Կ'ըսե.— Ախպեր ջան, ես շատ եմ ծարվըցե, նըստի մե ջուրըմ խմենք։— Ախպերն է կը նստի, քուրը մե ջուրըմ կը խմե, գըլոխ կը դնե ախպոր ծընկին կը քնի գը։ Ախպեր ուսո՞ւլ[1] գըլոխը կը դնե գետին։ Ախպեր գելնի ու կ'էրթա։ Քուրը քընուկ կը մընա էդ ախպըրի գլուխը։ Քուրը քընեն կը զարթի, կաշե օր ախպերը չըկա։

[1] Կամաց (Ս. Բ.)։

Ախպեր կ'էրթա իրեն հորն ու մորը քովը, կ'ըսե օր. «Քուրոջս գլուխ կորուցի ու եկա»։ Հերն ու մերն նոր գելնին ու դուքան տուն։

Քուրը կը դարթի, կաչե օր ախպերը չկա։ Քուրը գելնի ու կ'էրթա։ Կ'էրթա ու մե մերու մեջը գընգնի, կարիպ ու ջահել աղջիկ, ճամփա չիտե, ինք քաղքի աղջիկ, դուրս չ'ելե։ Էդ մերու մեջը գելնի մե բանձր փետիմ գլոխը։ Գելնի ու կը նստի էդ փետի գլոխը։

Փետի գըլոխը կը նստի ու կը մնա։

Մե թագավորիմ լավ մանչը իրեն չապառներով[1] էկեր է պըտըտվելու։ Ուրիշ հեռու երկրե է, աղջկա հորը երկրեն չէ, հեռու երկրե է։

Էդա աղջկան կը տեսնի էդա փետի գըլոխը, էդա աղջկան կը ճվա թե.— Աղջի, արի իջի ցած։

Էդ թագավորի մանչը աղջկան էդա փետի գլխեն գիջու ցածը, կը հեծու ձիուն ու կը տանի գը։

Կը տանի էդա աղջկան. կառնի կը թագավորի մանչը։

Կէղնի օր աղջկան ին ամիսը թըմի, կը պառկի էրկու մանչ կը բերե։ Էդ մանչեր գելնին տարեկան, կը քելեն կը, էդ աղջիկ էդ մարթուն օր առեր է, հետը հեչ չէ խոսե, ինչ օր լալ։

Մարթը մեծ խնձորըմ բերե էն մանչու մեկին կուտա. մեկը գուլա, մերը կըսե. «Ինչի՞ գուլաս, էնոր հերն է, քու էլ հերդ, մեկ խընձոր մ'ել թող քու ափըդ տա»։ Էտոր մարթը գիմանա ձենը կնկա, որ դիմանա, կըսե թե.— Այ աղջիկ, դու օր լեզու ունիս, իմ հետս ինչո՞ւ չես խոսի։

Աղջիկ իրեն մարթուն կ'ըսե թե.— Ընձի մերու մեջը գըտար, հեչ հարցուցի՞ր թե «դու ո՞րդից ես», հեչ ըսի՞ր թե «դու հերը ունի՞ս, մերը ունի՞ս», ես խո մերու մեջ չէի բուսե, ես է իսան էի, իսնի կըտոր էի, ես է հերը ունիմ, ես է մերը ունիմ։

Նորեն մարթը աղջկան կը հարցու գը.— Դու օր մեր ունիս, հեր ունիս էդ մերու մեջ ի՞նչ կ'էնեիր։

Ախչիկ կ'ըսե թե.— Հարի մերս ու հերս չգտնեմ, դարդս քեզի չիմ կըրնա արզ ընե։

Կ'ըսե թե.— Դու քու հոր ու մոր գեղի տեղը դիտե՞ս, աղջի։

Կ'ըսե.— Գիտեմ։

Կ'ըսե.— Քեզի կը խրկեմ գը, գնա հերդ ու մերդ տեսի։

Սարախտան մե տաս ձիավորըմ աղջիկը կը խրկե, օր էրթա ուր հերն ու մերը տեսնե։

Կ'էրթան, ճամփեն մութը գընգընի, հորը գեղը հեռու է։

Մութն օր գըյնի, շագըր կը զարկեն օր քընին, հարի լուսանա, ելնեն էրթան։

---

[1] Ջորքերով (Ս. Բ.)։

Աղչկան շաղբրը մեն կը զարկեն, էրիկ մարթոց բաշխա շագբրըմ կը զարկեն։

Աղչիկ կը բերե ուր տըղեքը քուն կը ղընե գը։ Կէղնի էդ մարթը-քոցեն էրկա հողորփոր մանչը, գուքա կը մըտնի էդա աղչկա շագբրը, կ'ըսե.— Աղչի,— կըսե,— տըղեքեդ էրկուսն էլ կը մորթեմ։

Կ'ըսե.— Կարելի՞ է, օր դու իմ տըղեքը մորթես, ինչի՞ պիտի մորթես։

Կ'ըսե.— Գիշերը պիտի գամ քո ծուցդ քընիմ։

Աղչիկը կ'ըսե թե.— էդա չէղած բան ա։

— Օր չէղած բան ա,— կըսե մարթը,— քու տըղեքը կը մորթեմ։

Մարթը կը դառնա, կը հասնա օր էդ մատղաշները մորթե, մեկը կը մորթե, կը դառնա օր մեկելն էլ մորթե, օր դառնա մեկելը, աղչիկը շաղբրեն կը փախնի։

Գիշեր է, աղչիկը կը փախնի ու կէրթա կը կորի։

Լուսանա կը, մարթիկ գելնին, գելնին օր ախչիկը չըկա։

Մարթիք լա հեչ մեկ խաբար չեն, մե էդ տըղեք մորթող մարթը գիտե։ Էդիկ բայան չէնե, թե. «Տըղեքը ես մորթեր եմ, աղչիկը փախեր է, կորեր է»։

Էդ մարթիքը կըսեն թե.— էս ի՞նչ բան է, էս աղչիկ ինչի՞ պիտի ուր տըղեքը մորթե ու փախնի։

Մարթիք գիտեն գը մերն է մորթե ու փախե, չիտեն թե մարթն ա մորթե։

Գելնին էգոնք թաքրար կը դառնան դուքան իրենց գեղը։ Գուքան թագավորու մանչի քովը, կըսեն թե.

— Քու կընիկը գիշերը իրեն տըղեքը մորթեր ու փախեր է, փախե կորեր է, մենք է ետ դարձանք էկանք։

Թագավորի մանչը կըսե.— էրթամ պիտի էդ աղչիկը ժուռ դամ կընդեմ.— կըսե,— աշխարքը պիտի ժուռ գամ ու գըտնիմ գը։

Կառնի իրեն հետ չորս ձիավոր, մեկը էն տըղեքը մորթողն է։

Ախչիկն էլ օր էդ գիշեր շաղբրեն կը փախնի, կէրթա իրենց հոր դեղի օխչըրի քովը, հերանց գեղի չոբանը կը ճանչե, չոբանը ախչըկան չի ճանչե։

Կ'ըսե թե.— Չոբան ախպեր, իմ վըրճիս էսա խաս խալըվները կուտամ քեզի, քու չոբանիդ հալավը տուր ընձի։

Չոբանը կը ծիծաղե գը, կ'ըսե.— Դու վըրես կը ծիծաղե՞ս,— կ'ըսե, քու վըրեճիդ տաս ու քըսան օսկի բան է, իմ չոբանիս հալավը ի՞նչ արժեք ունի օր ես հետը փոխեմ։

Կ'ըսե թե.— Չոբան, ես շիտակ կըսեմ, խառամութեն չեմ ընե, կը փոխեմ գը։

Աղջիկը կը հանե իրեն վրեճի խալավները, բիրաղի հարսնքի հալավներ, կուտա էդա չորրնին։ Չորան իրա վրեճի քեշ չորերը կուտա էդա աղջկան։

Աղջիկը կը հագնի չորնի հալավը, կ'ըսե թե.— Չորան մեմե ուլիմ փոստ ընձի տուր։

Չորանն է կը բերե ուլըմ կը մորթե, փոստը կը հանե, կուտա էդա աղջկան։

Աղջիկ էդա չորնի հալավը օր կը հագնի, կէղնի մե չորանըմ, ուլին փոստն էլ կառնի իրեն, կը փաթթի իրեն գլոխը ու կը կապե։ Աղջիկը իրեն մազերը թոփ կ'էնե վոստի տակը, փոստն է թարս կը փաթթե գլոխը։

Էդտից գուքա իրեն հորը գեղը։ Գուքա իրեն հորը պատի տակ ու կը նըստի։

Ախպերը դուրս գելնե, գուքա պատի տակ, օր մե քյալ մարթ նստեր է, աղջիկ է քիթ ու բերան փոստով փաթթուկ է։

Ախպեր դառնա ու կէրթա իրեն հորը քովը, կըսե թե.— Հայրիկ, մե քյալ մանչըմ մեր պատի տակ նըստեր է։

Հերը կըսե թե.— Հալա գընա էն մանչուն ըսա, աչե կանա՞ մեր ձիանուն սեյիս էլնի[1]։ Ախպեր կը դառնա գուքա էդ մանչու քովը։

Կ'ըսե.— Քյալ մարթ, ձեռնեգ գուքա՞, գաս մեր ձիանք քեսլես, մողաթ կենաս։

Կ'ըսե.— Գուքա, ինչի՞ չի դա,— կըսե,— գուքամ, մողաթ կը կենամ։ Գուքա, իրեն հորը ձիաներուն կէղնի սեյիս։

Ոնչ հերը, ոնչ մերը, ոնչ ախպեր չեն ճանչե։ Էղիկ իրեն հերն էլ, մերն էլ կը ճանչե գը։

Էդ աղջկան մարթը՝ թագավորու մանչը հ'ընգեր է ու էդ աղջկան ժուռ գուքա։ Գուքա գելնի էդոր հորը գեղը։

Գուքան դեղի քովը, էդ թագավորի մանչը կըսե թե.— Ես ձիուս գամը պիտի վեր թողնեմ, ում դուռ օր կայնավ, ես հոն պիտի իշնիմ։

Ձին գուքա ու էն քյալ մանչու դուռը կը կայնի։

Քյալ մանչը գելնի օր միսաֆիր ի եկե, ձիուն նե կը քաշե։

Քյալ մանչ իդոր կը ճանչե գը, օր իրեն մարթն է։ Կը տանե իրեն հորը օդեն ու կը նըստեցնե գը էդ թագավորու մանչուն։

Հ'իրիկուն կէղնի էդ թագավորի մանչը կըսե թե.— Աչեր հեչ հեքաթ ասող չրկա ձեզի,— էդ ախչկա ախպորը կըսե։

Ախպերը գուքա էդ քյալ մանչուն կըսե.— Հեչ հեքաթ ըսել չիտե՞ս։

---

[1] Խնամող (Ս. Բ.)։

Քյալ մանչը կըսե թե.— Գիտեմ։

Կէրթա էդա միսաֆիր թագավորին մանչին կըսե թե.— Մեզի մի քյալ սնյիսըմ կա կըսե,— կըսե,— էղիկ գիտե հեքաթ ըսել, բերեք օդեն, թող հեքաթ ըսե։

Գուքան էդ քյալ մանչուն կը տանին հ'օգեն։

Քյալ մանչը իրեն մարթուն կը ճանչե, տըղեք մորթող մարթուն էլ կը ճանչե. էդ տիրացուն հորն օր գիրըմ գրեր ղրկեր է, էդ տիրացուն էլ էդ օդեն է։

Էղ քյալ մանչ բաշլամիշ կընե հեքաթը։

Կ'ըսե.— Բերեք մե ղազըմ դրեք օճախը, հարի էն ղազը էփի, ես էդ հեքաթը կը խըլսիմ գը։

Կ'ըսե.— էդ հ'օդեչեն մարթ պիտի դուրս չէլնի, դըսեն էլ մարթ պիտի չի գա հ'օդեն։

Հ'օդեն էլ իրեն մարթն է, իրեն հերն է, իրեն ախպերն է, իրեն մերն է իրեն տըղեքը մորթող մարթն է, իրեն գիր գրող առաջուց խրկող մարթն է, էն տիրացուն էլ էդ օդեն է։

Քյալ օղլան էս հեքաթ թաքրար էդ հ'օդեն թարիֆ կ'էնե։ Իրեն հերն ու մերը, ախպերն ու մարթը, տըղեքը մորթող մարթը, տիրացուն քուլլի անկաչ կէնեն, օր էդ հեքաթ թարիֆ կ'էնե։

Էդ քյալ մանչ հեքաթը կը խըլըսի, իրեն գըլուխի ուլի փոստը գիչու, իրեն մազերը ցած կը թափի ու կէրթա իրեն մարթու կոլթուղի տակ ու կը նստի գը։

Մարթուն կ'ըսե.— էս, իմ տըղեքը մորթողն է, էսի քու լա՞վ մարթն է, տրղեք օր մորթեց, վախեցա ու հ'ելա ու փախա։ Հորս օր գիր գրեր ղրրկեր է, էսիկ է իմ հորս լա՞վ մարթն է, էսոր էլ իմ հերս թամբահ էրավ, թե էսա աղչկան մողաթ կացի, ինք ելավ ու ուխտ դընաց, էսիկ է գեշ գիր գըրեց ու խրկեց հորս թե. «Քու աղչիկ գեշ ճամբու հետն էր։

Թագավորի մանչը գելնի էդ էրկուսի ճիտը կը զարկե գը, կառնի իրեն կնիկը ու սարախտան կէրթա իրեն երկիրը։

Ինոնք իրենց մուրազին հասան, անկանչ ըրողն էլ, գրողն էլ ուրենց մուրազին հասնին։

Աստված էլ աշխարքին խախանդութեն տա։